



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
նախնական ուսումնասիրության

Ազգային Հակակոռուպցիոն Խորհուրդը (այսուհետ՝ ԱՀ Խորհուրդ) նախնական ուսումնասիրության է ենթարկել ՎԵՏՕ նախաձեռնության ղեկավար Նարեկ Մայանի հաղորդումն այն մասին, որ ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանն իր լիազորություններն իրականացնելիս կատարել է այնպիսի արարք, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելուն միտված գործողություններ, ինչն էլ առաջացրել է շահերի բախում՝ արգելված «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով:

Մասնավորապես, իր հաղորդմամբ Ն.Մայանը հայտել է երեք հանգամանք, որոնք էլ ենթակա են նախնական ուսումնասիրության.

1) Կոռուպցիայի, մասնավորապես շահերի բախման դրսևորում է, երբ նախարարի ընտանիքի անդամը բիզնեսով է զբաղվում տվյալ նախարարի համակարգման ոլորտում: Առավելևս, երբ այդ բիզնեսը հիմնադրվում է անձի՝ նախարար դառնալուց հետո և ոչ թե առաջ:

2) «ԱԺ-ում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքը տարածվում է նաև ԱԺ փոխխոսնակի խորհրդականի նկատմամբ, իսկ այդ օրենքը ուղիղ արգելում է կատարել այլ վճարովի աշխատանք: Նշված բիզնեսը այլ վճարովի աշխատանք է:

3) Երբ առանց մրցութային կարգի պետական աշխատանք են տալիս ընկերոջ կամ մտերիմի տիկնոջը, դա նույնպես կոռուպցիայի դրսևորում է. կոչվում է «քրոնիզմ» (cronyism):

ԱՀ Խորհրդի կողմից նախնական ուսումնասիրության ընթացքում Ն.Մայանի կողմից բարձրացված հարցերը համակողմանի ուսումնասիրվել են բացահայտման ենթակա հետևյալ հանգամանքների շրջանակներում.

1. արդյո՞ք ՀՀ արդարադատության նախարարի հետ փոխկապակցված անձը (ամուսին Տաթևիկ Մարգարյանը) նախարարի նշանակվելուց հետո սկսել է զբաղվել ձեռնարկատիրական այնպիսի գործունեությամբ, որն առնչվում է նախարարի համակարգման ոլորտին:

Պարզվել է.

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի հետ փոխկապակցված անձը (ամուսին Տաթևիկ Սարգսյանը), Ռ.Բադասյանի հանրային պաշտոնում նշանակվելուց հետո, այլ անձի հետ համատեղ, հիմնադրել է առևտրային ընկերություն, որի հիմնադրման պահից մինչ օրս, գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնում, ղեկավարել է այդ ընկերությունը: Ընկերությունը գրառվում է ՀՀ արդարադատության նախարարի ղեկավարման և համակարգման ոլորտին առնչվող առևտրային գործունեությամբ:

Այսպես.

Տաթևիկ Սարգսյանը հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի ամուսինը, այսինքն՝ պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձ. այս հանգամանքը հաստատվում է Ռ.Բադասյանի ներկայացրած գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրով: Մամուլում առկա տեղեկությունների համաձայն՝ Տաթևիկ Սարգսյանը հիմնադրել է առևտրային ընկերություն, որն ունի «ԹԻ ԱՐ ԼՈ ՖԸՐՄ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) անվանումը: ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված տվյալների համաձայն՝ «ԹԻ ԱՐ ԼՈ ՖԸՐՄ» ՍՊԸ ընկերությունը հիմնադրվել է 2019 թվականի մայիսի 7-ին, և ընկերությունում Տաթևիկ Սարգսյանն ունի 60 տոկոս մասնակցություն: Նույն տվյալների համաձայն՝ հիմնադրման պահից մինչ օրս ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է Տաթևիկ Սարգսյանը: Համաձայն ՀՀ ՊԵԿ-ի հարկային ծառայությունում գրանցված տվյալների՝ ընկերության կարգավիճակը «գործող» է:

ՀՀ արդարադատության նախարար Ռ.Բադասյանը 2018 թվականին նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, իսկ 2019 թվականի հունիսի 19-ին՝ արդարադատության նախարար: Այսպիսով հաստատված է համարվում, որ ընկերության ստեղծման պահին Ռ.Բադասյանը հանդիսացել է հանրային ծառայության պաշտոն գրադեցնող անձ, թեև ոչ արդարադատության նախարար:

Համաձայն ընկերության ինտերնետային կայքի (www.trlawfirm.info)՝ ընկերությունը մատուցում է իրավաբանական և փաստաբանական ծառայություններ մասնավորապես հետևյալ ոլորտներում՝

1) Իրավաբանական անձանց, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի գրանցում, վերակազմակերպում, լուծարում, կանոնադրության և այլ փաստաթղթերի կազմում, կորպորատիվ իրավունքի հարցերով խորհրդատվություն, Կորպորատիվ իրավունքի հարցերով ներկայացուցչություն դատարաններում և արբիտրաժային վարույթներում: Հասարակական միավորումների, հիմնադրամների ստեղծում, գրանցում:

Այս ոլորտից ընդգծված ծառայություններն ամբողջությամբ առնչվում են ՀՀ արդարադատության նախարարության ղեկավարման և համակարգման ներքո գործող՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործառույթներին:

2) Իրավական ներկայացուցչություն դատական վարույթներում, քաղաքացիական վարույթում, սնանկության վարույթում, արբիտրաժային վարույթում և հաշտարարության

գործընթացում, վարչական դատարանում, վարչական վարույթներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության և այլ վարչական մարմինների վարույթներում:

Այս ոլորտում ընգծված ծառայություններն ամբողջությամբ առնչվում են ՀՀ արդարադատության նախարարության ղեկավարման և համակարգման խնդիրների ներքո գտնվող հարցերին: Մասնավորապես, նախարարությունն իրականացնում է սնանկության կառավարիչների որակավորման գործընթացի ապահովումը, հաշտարարության ոլորտում՝ քաղաքականության մշակումը և իրականացումը: Նախարարության ենթակայությամբ գործում են բազմաթիվ վարչական մարմիններ, որոնք քաղաքացիների իրավունքների և պարտականությունների շրջանակներում իրականացնում են լայնածավալ վարչարարություն, որոնցով անձանց տրամադրվում են իրավունքներ և պարտականություններ կամ սահմանափակում են անձանց որոշակի իրավունքներ:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն ամբողջությամբ գտնվում է արդարադատության նախարարության ղեկավարման և համակարգման՝ ենթակայության ներքո:

3) Անձնական տվյալների մշակման վերաբերյալ խորհրդատվություն, անձնական տվյալների սուբյեկտի իրավունքների պաշտպանություն:

Այս ոլորտն ամբողջությամբ առնչվում է ՀՀ արդարադատության նախարարության ղեկավարման և համակարգման (ենթակայության) ներքո գործող՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության գործառույթներին:

4) ... ներկայացուցչություն նոտարական գրասենյակում:

ՀՀ արդարադատության նախարարությունը նոտարական գործունեության ոլորտում իրականացնում է քաղաքականության մշակումը և իրականացումը:

5) Հարկային օրենսդրության վերաբերյալ խորհրդատվություն, Հարկային վեճերով ներկայացուցչություն, դատական գործերի վարում:

Ռուստամ Բադասյանը, նախքան նախարար նշանակվելը, աշխատել է որպես ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, հետևաբար այս ոլորտը, բացառությամբ դատական գործերի վարումից, ամբողջությամբ առնչվել է Ռ.Բադասյանի հանրային պաշտոնի շրջանակներում գտնվող՝ ղեկավարման և համակարգման ոլորտին:

2. Արդյո՞ք արդարադատության նախարար Ռ.Բադասյանի հետ փոխկապակցված անձ Տաթևիկ Սարգսյանը միաժամանակ աշխատել է ՀՀ ԱԺ աշխատակազմում և առևտրային ընկերությունում՝ միաժամանակ վարձատրվելով երկու գործատուներից:

Պարզվել է.

Արդարադատության նախարարի հետ փոխկապակցված անձը (ամուսին Տաթևիկ Սարգսյանը), աշխատելով ՀՀ ԱԺ աշխատակազմում (ԱԺ նախագահի տեղակալի փորձագետ), միաժամանակ զբաղեցրել է ղեկավար պաշտոն առևտրային ընկերությունում և,

բացի ԱԺ աշխատակազմից, միաժամանակ ստացել է վարձատրություն նաև այդ ընկերությունից:

Այսպես.

Համաձայն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված տվյալների՝ Տաթևիկ Սարգսյանը 2019 թվականի մայիսի 7-ից մինչ օրս գրադեցնում է «ԹԻ ԱԲ ԼՈ ՖԸԲՄ» ՍՊ ընկերության տնօրենի պաշտոնը:

Ըստ մամուլում առկա տեղեկությունների՝ Տաթևիկ Սարգսյանը նախկինում աշխատել է ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանի գրասենյակում՝ որպես փորձագետ: Համաձայն նույն աղբյուրների՝ Տ.Սարգսյանն ազատվել է ԱԺ աշխատակազմից 2019 թվականի ամռանը (<https://armenpress.am/arm/news/1000966/> և <https://www.tert.am/am/news/2020/01/09/Malyan/3181166>):

Հիմք ընդունելով վերը նշված տեղեկությունները՝ կարող ենք ենթադրել, որ Տաթևիկ Սարգսյանն առնվազն 2019 թվականի մայիսից մինչև օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում աշխատել է ՀՀ ԱԺ նախագահի տեղակալի գրասենյակում՝ որպես փորձագետ:

Պարզելու համար, թե արդյոք Տաթևիկ Սարգսյանը միաժամանակ վարձատրվել է երկու գործատուներից, Խորհուրդն ուսումնասիրել է Չինձառայողների ապահովագրության հիմնադրամի պարտադիր վճարողների բազան, որտեղ առկա են տեղեկություններ վարձատրություն ստացող բոլոր անձանց մասին: Համաձայն օրենսդրության՝ Չինձառայողների ապահովագրության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կայքում տվյալները հրապարակվում են այնպես, որ հնարավոր է դառնում պարզել, թե անձը միաժամանակ քանի գործատուից է ստանում վարձատրություն, քանի որ կայքում անձի 1000-ական դրամների վճարումները զետեղվում են առանձին տողերով: Այսպիսով, ուսումնասիրելով Տաթևիկ Սարգսյանի տվյալները Հիմնադրամի կայքի (www.1000plus.am) պարտադիր վճարողների բազայում, արձանագրվել է, որ 2019 թվականի մայիս, հունիս և հուլիս ամիսներին Տաթևիկ Սարգսյանի անվամբ այդ ամիսներին երկուական անգամ վճարվել է 1000-ական դրամներ, հետևաբար հաստատված է համարվում, որ այդ ամիսներին նա վարձատրվել է երկու գործատուի կողմից:

3. Արդյո՞ք Տաթևիկ Սարգսյանն ԱԺ նախագահի տեղակալի գրասենյակում փորձագետ է նշանակվել առանց մրցույթի:

Պարզվել է.

Արդարադատության նախարար Ռուստամ Բադալյանի հետ փոխկապակցված անձը (ամուսին Տաթևիկ Սարգսյանը) ՀՀ ԱԺ աշխատակազմում ՀՀ ԱԺ նախագահի տեղակալի գրասենյակում փորձագետ է նշանակվել առանց մրցույթի:

Այսպես.

Համաձայն «ՀՀ ԱԺ աշխատակազմի հաստիքացուցակը հաստատելու մասին» ՀՀ ԱԺ նախագահի 13.07.2019թ. թիվ Կ-219-Ա որոշման 1-ին հավելվածի 8-րդ կետի՝ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալի գրասենյակի փորձագետի պաշտոնի տեսակն է՝ «Քաղաքացիական աշխատանք կատարող»։ «ՀՀ ԱԺ աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքի համաձայն՝ նույն աշխատակազմում պարտադիր մրցութային կարգով նշանակվում են միայն պետական ծառայողները, հետևաբար ՀՀ ԱԺ նախագահի տեղակալի գրասենյակի փորձագետին մրցութով նշանակելը, ըստ նշված օրենքի, պարտադիր չէ։

Սակայն Խորհուրդն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով», իսկ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ փորձագետ կարելի է ներգրավել Կառավարության կողմից սահմանված կարգով և դեպքերում։

Խորհուրդն այս փուլում չի պարզել, թե արդյոք ՀՀ ԱԺ աշխատակազմն իրավունք ուներ ընդհանրապես, ինչպես նաև առանց մրցութի, ներգրավել փորձագետի։

Ամփոփելով վերոգրյալը՝ Ազգային Հակակոռուպցիոն Խորհուրդը գտնում է, որ Արդարադատության նախարարի և նրա հետ փոխկապակցված անձի կողմից կատարվել են այնպիսի գործողություններ, կամ թույլ է տրվել այնպիսի անգործություն, որոնք ողջամիտ կասկած են հարուցում այն մասին, որ դրանցում առկա են «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով արգելված շահերի բախման հատկանիշներ։

Ելնելով սույն նախնական ուսումնասիրությունների արդյունքներից՝ Խորհուրդը վերջնական գնահատական տալու համար անհրաժեշտ է համարում իրականացնել խորացված փորձագիտական քննություն։

Քննությունը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ իրականացնելու համար Խորհուրդը բոլոր շահագրգիռ անձանց և մարմիններից սկսել է հավաքել անհրաժեշտ տեղեկություններ և դիրքորոշումներ։ Այդ նպատակով իրականացվում են բազմաթիվ հարցումներ և անհրաժեշտ այլ գործողություններ։

Ծանուցում: Սույն եզրակացությունը կազմվել է Խորհրդի կողմից իրականացված նախնական ուսումնասիրությունների արդյունքներով, ուստի դրանք վերջնական չեն և չեն հավակնում դիտարկվել որպես վերջնական հաստատված հանգամանքներ: Այնուամենայնիվ, եզրակացության այն հանգամանքները, որոնք արձանագրված են «հաստատված» եզրույթով, համարվում են արդեն իսկ հաստատված հանգամանքներ: